ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/21» ԵԱՇԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27 ապրիլի 2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ա. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան:
Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/21» ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Վարդանյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Վարդանյան)

1.1 25.04.18թ. գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման ժամանակ արձանագրվեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են, և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ի և «Յունիվերսալ Իմփորթս» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերի, մասնավորապես, «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում բացակայում են սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը՝ մասնակցին առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո, սահմանված կարգով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 17.04.2018թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը, և, քանի որ, «Յունիվերսալ Իմփորթս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը չէր համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովը որոշեց 25.04.18թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն, մասնակցին առաջարկել, սահմանված կարգով, **մեկ աշխատանքային օրվա ընթացքում** շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են վերը նշված անհամապատասխանությունները:

1.2 27.04.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ի, Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Յունիվերսալ Իմփորթս» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատել համապատասխանող «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Վարդանյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող	Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գնահատող	Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Գնահատող	Տ.ՀԱՐՈՅԱՆ
Գնահատող	Ս. ՆԻԿՈԼՅԱՆ
Գնահատող	Ա. ՄԱՂԱՔՅԱՆ
Գնումները համակարգող՝	Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ